Սոնպէս և հասարակ բայք՝ յորժամ վարին իր եկ ըզներկրործական, առնուն զինդիր սեռի 'ի հայցական հոլովն. կը, \* Վահնդիր յիմարն յիմարուն խօսեսցի, և սիրտ նը զնանրուն իր հոգինցի. — եռայ. լը. 6: Ուր հայցական հոլովքս յիմարուն և զնանրուն՝ են խնդիր սեռի հասարակ բայխոց՝ խօսեսցի և խորհնեսցի:

Այլ աստ գիտելի է, զի Երբեմն այս խնդիր սեռի զօրութեամբ դնի. կը, \* Երանելի այն ոչ է՝ որ ուսուցանէ. այլ այն որ առնէ և ուսուցանէ. — Վարդ հարց. բ: Ուր զօրութեամբ կայ խնդիր սեռին. յու է զբանն այ. ոպթէ ասէ ը. ոչ է այն Երանելի՝ որ զբանն այ ուսուցանէ. այլ այն, որ առնէ զայն, ևն:

Գիտելի է դարձեալ զի ներկրործական բայք ինչ ուրեք ուրեք զերկուս հայցական խնդիրս առնուն զմին իբր խնդիր սեռի, և զմիւսն իբր խնդիր բնուն:

Խրբ ուղղական. կը, \* Դրու զժ առնես զքեզ. — փոխանակ ասելոյ, ու առնես զքեզ. յուն. ը. 53:

Խրբ տրական. զոր օրինակ, \* Հարցից և ես զձեզ բան մի. — փոխանակ ասելոյ, հարցից ձեզ զբան մի. Տոդ. չո. 24:

Խրբ պատմական. կը, \* Եւ ուսուցաներ զնոսա առակօք բազում ինչ. — փոխանակ ասելոյ զբազում իբաց. հոք. դ. 2:

Խթը գործիուկան. պը, \* Եւ որ արբուսցէ միում 'ի փոքրկանց յայսցանէ բաժակ մի ջուր յուրա միայն յանուն աշակերտի, ամէն ասեմ ձեզ, ոչ կորուսցէ զվարձս իւր. — Տառ. չ. 42. փոխանակ ասելոյ բաժակաւ. որպէս դնի. Տ-ը է. Բ. 40:

Ա. յսպիսի, հայցական հոլովք՝ որք դնին փոխանակ գործիականի, յաճախ 'ի գործ ածին 'ի յարաբերականս ներգործական բայից 'ի յաբիլ նոցա յարմատս, կմ' 'ի բայցանուանս նոցա. պը, \* Աէրն զոր սիրեցեր զիս, 'ի նոսա իցէ. — յի սէրն որով սիրեցեր զիս, յահն. չէ. 26. \* Ա. յս եցեն հարուածք զոր հարցէ տէր զազգս ամ: — յի որով հարցէ տէր զազգս ամ: զոտը. չէ. 12. \* Աէրիցեն... իւրաքանչիւր զմարմին ընկերի իւրոյ՝ 'ի նեղում և 'ի պաշարման, զոր պաշարեցին զւուա թշնամիք իւրեանց. — յի որով պաշարեցին. երէմ. չէ. 9. \* Փոխանակ թշուառութեանն, զոր թշուառացուցին զքեզ կոռոքն, փառք տեառն իւլերայ քա ծագեցցին: — յի որով թշուառացուցին զքեզ. գէտք. է:

Այս այս և 'ի չեղոքական բայս լինի 'ի յարաբերական որն. զորմէ ունիմք խօսիլ 'ի վերջին կանոնն խընդրառուն չեղոքական բայից:

Պիտելի է ևս, զի ումանք 'ի ներգործական և 'ի հասարակ բայից երթեմն փոխանակ հայցականի ուռնուն զխդիր յայլ հոլովս: պը, \* Դու ոչ լսէր քո աղօթիցն. և կամիս զի ած լսիցէ. — սէ. 'ի ձէն. Տառ. չէ. 28. \* Աշ-գուշացէ մեծի նեղունս մարմնոյ. — եղէլ չ: \* Պատուիրեցնամս լսաւէլ 'ի պաղոյ ծառոյն. — եղանէ. Էս. \* Օխարդ կարացից այդմ առնէլ. — եղէլ վարդութ. չ:

Խսկ ներգործական բայքս՝ երկիրպագանեմ կմ' երկիրպագեմ, յաղթեմ, ստունգանեմ, և ստունգանեմ, հասարակօրէն առնուն զխնդիր սեռի 'ի վերջահոլով տրականն. կը, \* Տեառն ոյ քում երկիրպագցես և զնա միայն պաշտեացես. — Տառ. դ. 10. \* Օօրացցոյ զմեզ զի յաղթեցն-այնմիկ՝ որ յաղթահարեաց զբուռն մեր. — եդն հուր. չ. 19. \* Աչիւչ կարեին ստունել հմա. — յահն. հ-ն. \* Ա՞ն ստունգանեցուք պատուիրանին. — ստք. յաէ. չ:

## ԳԼՈՒԽ Խ. ԺԿՑԱ

ՅԵՂԱԳԻ ՀԱԿՈՒՐԻ ԲՆԱ-Է ՆԵՐԳՈՐԾ Ա-ՀԱՅԻՇ:

**Ը**այք ներգործականը բաց ՚ի խնդրոյ սեռին՝  
առնուան նաև զինդիք բնուե՞ ՚ի պլազէս ՚ի հոլովա. և ոյս  
չորեքելին. ՚այս՝ իբր ըստ ինքեան, որ և ասի բռնի քննիչ  
բնու-Է. ՚ի այնպիսին զոր բնուե՞ բային ըստ առաջին նշանա-  
կան իւրում պահանջէ. որպէս բայս առաջեւ ըստ ինքեան  
պահանջէ առնուալ ինդիք բնուե՞ զնախղիճ արական. ի՞ր,  
\* ԱՀ-Ա-Ե-Ա- առ մեզ զհազի իւր. — ՀՀ-Ի. զ: Ուր հախ-  
դրից տրական հոլովդ՝ առ եւս է բուն խնդիք բնութեն-  
ե-յին առաջեւ

Երկրորդ՝ իբր յականին, կմ՞ ըստ յարմարուե՞ . ՚ի այն-  
պիսի խնդիք՝ որ դնի ՚ի տեղի բուն խնդրոյ բնուե՞ յար-  
մար այսու նշանակուե՞ զոր ունի բայն ՚ի բանի անդ. Ոկ  
եթէ բայս առաքել, որ ըստ ինքեան պահանջէ առնուալ  
զնախղիճ տրական, փոխանակ նորա առնուցու զպարա-  
սական, կմ՞ զայլ հոլով ՚ի ձեռն հախադրուե՞ . ի՞ր, \* Հոր-  
դան իւրոյ զօրուն տուեալ առաջեւ զկողմանքը ձօւաշ գա-  
ւառի. — յովի. ի-ն: Ուր բառդ՝ զիտչամբէ՝ եղեալ է փո-  
խանակ բուն խնդրոյ առաջեւ բային. իբր խնդիք յարմա-  
րական. ՚ի յարմարեալ և եղեալ ՚ի տեղի բուն խնդրոյ  
առաջեւըն, մինչեւ ոչ ևս զօրուե՞ պահանջէ զայն

Երրորդ՝ իբր երիբբուհն. ՚ի այնպիսի խնդիք՝ զոր  
բայն ըստ բնուե՞ իւրում երկրորդաբար պահանջէ. Որպէս  
բայս առաջեւ երկրորդաբար պահանջէ առնուալ զննդիք  
՚ի հոլովն բացառական. ի՞ր, \* ԱՀ-Ա-Ե-Ա- ՚ի մեզ որ զօգ-  
նուե՞ ՚ի եռնե սրբոյ քումմէ. — շոր. ի-ի: Ուր բացառ-  
կան հոլովս ՚ի լեռնե դնի իբր երկրորդական խնդիք բա-  
յիս՝ առաջեւ:

**Չ**որրորդ՝ իբր պատուհան, կմ՞ ըստ պատահման. ՚ի այն-  
պիսի խնդիք՝ որ ըստ պատահման դիպի բային. որպէս հոյն  
առաջեւ բայս կարէ սունուալ ըստ պատահման. զինդիք յայլ և  
այլ հոլովս, և կմ՞ նախադրութեամբք, կմ՞ գերբայիք. ի՞ր,  
\* Որ աւետառոր քում զալստեանդ առաջեւ յաշխարհ ըզ-

սուրբ մարգարեհսն. — յաբ զէ Աւը ուղղական հոլովս ա-  
-եստեսք՝ է պատահական խնդիր բայիս առաջեցեց. \* Աշ-  
-տատեցին զերիուսարդս իւրեանց զջըց. — էրեմ. ժ. 3.  
Աւը պատմական հոլովս զջըց՝ է պատահական խնդիր  
բայիս առաջեցին. \* Աշտատեց զհրեշտակս իւր փողով մե-  
ծաւ. — Տար. Է. 31. Աւը գործիսկան հոլովս դողով է  
պատահական խնդիր բայիս առաջեցի. \* Աշտատեց առ մը-  
շակսն ՚ի ժամանակի ծառայ մի. — Տար. Ժ. 2. Աւը ներ-  
գոյական հոլովս ՚ի ժամանակի՝ է պատահական խնդիր բա-  
յիս առաջեց. \* Աշտատեց զձեզ առանց քսակի և մաղա-  
զախի և կօշկաց. ~ զուտ. Է. 55. Աւը բառս առանց գոտի՝  
է պատահական խնդիր բայիս առաջեց. \* Աշտատեց զնա  
յագարակ իւր արածել խոզս. — Էդուար. Ժ. 15. Աւը գեր-  
բայս արածել ՚ի արածել՝ է պատահական խնդիր  
բայիս առաջեց:

Խակ առ ՚ի որոշել՝ թէ ներգործական բայք յոր հո-  
լովս պահանջեն տիրապէս զխնդիր բնուել ըս ինքեան, դի-  
ցուք քանի մի կանոնս հանդերձ քահի մի օրինակօք. Աւ  
թէպէտ զորս կանոնադրեմք աստ՝ նորին, դայլ խնդիր ևս  
առնուեն, բայց այնորիկ ոչ են բուն խնդիր. այլ կմ՞ երկր-  
ըորդական, կմ՞ յարմարական, և կմ՞ պատահական. Աւ զի  
որք երկրորդականքն են՝ և պատահականք՝ ինքնին որոշին,  
թողումք դայնս, և միայն վասն յարմարականաց յարեմք ըդ-  
կնի բուն խնդրոց զերիս երիս օրինակ:

### Առան. 2.

Բայք՝ որք ասին առաջ է արգի, ՚ի որք նշանակեն  
զգործադուի առնելոյ զիմն՝ այս ինչ, կմ՞ համարելոյ և կմ՞  
անուանելոյ զիմն՝ այսպիսի ինչ, առնուեն զխնդիր բնութէ-  
յուղական հոլովս. և սոքա են սակաւ յոյժ. զր, \* Ա. Ժ.  
ամ. մեշք . . . մեղաւոր միայն առնեն զմարդու խակ ամ-  
բարտաւանուին ստանայ գլխովին առնէ. — արգ. յակ. Է.  
\* Օ ահեկն հեթանոց՝ զ Յեղադրեցին. — Դար. Գոկ. առաջ  
\* Յեղբարս ջաղովս օրինց՝ սահուլ սմին հմբիմք. — լոն. էինչ. \* Շանա զկենա աշխարհիս առանձիւ առանձիւ. — յակն. էնդր.  
ժէ. \* Շան զնա աւետարանիչս յոբիրին. — նաևայ. Ա. 4.

Ոմանք ՚ի աեղի բռն խնդրոց և յարմարուն առնուն զուղղական էր, \* Խմաստասէրք փոքր աշխարհ առաջին զմարդ. — Խռորդի և Եթէ զշամբս եղեղանց յուրինեց գրիս... ոչ բաւական կարծեմ զնոսա. — առջ. յոհ. է:

Այլ աստ գիտելի է, զի ներգործական բայք երբեմն առնուն խնդիր զբայխնուանս իւրեանց յուղղական հոլովն՝ ՚ի տեղի գործիականի. ի՞ր, \* Եւ եւ եղեկիա լալիան մեծ. — ի՞ր լալով մեծաւ. եսոյ լը. օ: \* Ռ.Ծ ըգ մարդիկ վերստին ծնունի ծնունդ անախտ և հոգեւորական. — առջ. յոհ. դ: \* Ենոք զնոսա հայուածոյ յոյժ. — լոյն առջ. հե:

Այսպիսի ուղղական հոլովք կարեն ևս համարիլ երբ առորոշ հայցտկան՝ փոխանակ գործիականի. եղեալ. որպէս է տեսանել յոյս բան. \* Օ հարուածս թշնամնց հարի ըցքեղ. — ի՞ր հարուածովք թշնամնոյ. եւել. լ. 14:

### Առան. Բ:

Ծայք՝ որք ասին երբորդ հորդի, ի՞ր որք ունին դնշանակունի տուչական՝ կմ իբր տուղղական, առնուն զվերջահոլվ տրական. կը, \* Տուշ խմաստնոյն պատճառս, և իմաստնագոյն ևս լիցի. — առավ. ի: \* Վապելոցն դասք ուշուցին հեթանոսաց զջուրն կենդանի. — իդատ. ժ. 1: \* Տնօրինեաց մարդկան ազգի զփրկութե. — լմբ: հասոր: \* Քըշուեաց նմա շահս ՚ի վաստակոց իւրոց. — իմաստ. ժ. 10: \* Հորդինոց մեղ ձնաւապարհ նորոգ և զենդանի. — լոյն. դաս: \* Ատուն և առասպելեաց բնան (զլսելիսն) յաժարութ. — շնորհ. ՚ի բառը:

Ոմանք փոխանկ բռն խնդրոց՝ և յարմարուն առնուն զվերջահոլվ տրական. կը, \* Ծայքի ունէ որք բարեց. — առջ. միդ. հ: \* Օ ամ քոյնանիւսդուն սիրոյն քրիստոսիւ. — իսուր: \* Ըրթաց և լեզուոյ դնել դրունա աղաջեմք. — շնորհ. ընդհանր:

### Առան. Գ:

Ծայք՝ որք ասին երբորդ հորդի, ի՞ր որք նշանակեն զգործողունի ածելոյ զիմն առ այլ առնուն դնախողիւ տը-

բական. պը, \* Խոստովահնելն ՚ի խոնարհութե -ծէ զմեղ. — Եռուշը: \* Դեկը ոչ երեք քոնարար զօք վարեն ՚ի կորուստ. — Եղիշ. Է: \* Ոչ դադարեն մուծանել զխոռվութե յառագաստ խաղաղութե երկնաւոր հարանարանին. — Հնորդ. ընդհանր: \* Արքկառեալ առիս զաջդ ամենագով. — Նոր. ՚ի բանե. ղը: \* ՚Ի սեղան արքայութե զմեղ հրաւիրէ. — Արք. ՚ո. պէս. ը: \* Օգերն ՚ի հոգի փոխարկէ. — Արք. Հորդադիդ:

Ամանք Ըստ յարմարութե առուն զնախդրիւ տրական. պը,  
\* Արք ևս համարիցիք զնոսա ՚ի մարդիկ. — Էսյ. լգ. 8:  
\* Վթէ ես ինչ ստեցի ոյսմիկ երդման, հատու տէր ած  
զվաս ստուն իմոյ ՚ի գլուխ իմ. — յովհ. իով: \* Ո՞ իցէ  
՚ի ձենջ մարդ՝ ցոր խնդրից որդի իւր հաց, միթէ քար  
տայցէ նմա. — փոխանակ ասելոյ, յորմէ խնդրիցէ. Տոպ. է.  
9. Լ շուշ. ժա. 41:

### Ապառն. դ:

Ռայք՝ որք ասին չորրորդ հորդի, յը որք ունին զնշա-  
նակութե բացառողական, (այս է՝ բառնալոյ կմբ առնլոյ  
զինն յայլմէ), առնուն զիմնդիր ՚ի հուալն բացառական. պը,  
\* Շորչէ ՚ի ձենջ զըսունայն միսիթարութիւն ձեր. — Էսյ.  
էլ. 19: \* Օձեղ ընդրեւոյ ած յամ ազգաց. — անանիա  
\* Արք ոք զձեր բաժինն. ՚ի ձենջ հասանիցէ. — Եղիշ. Է:  
\* Փորբան. ՚ի մուաց իմոց զմէկ միթում. — Կարէ իոցի. լր:  
\* Հոյցէր ՚ի կենացդ զմահ. — ՚ի շարունացն. իւնոն. ժո:  
\* Կոքա ուստա ՚ի քսէ զիւղութիւն և մեղ աւանդեցին. —  
լոյն. սոցի:

Ամանք Ըստ յարմարութե առնուն զբացառական. պը,  
\* Օտուն իւր յանիրաւ ստացուածոց անտի ըստ, և  
մեծանալ կարծէ. — Հնորդ. ընդհ: \* Հոսպատիւոյ զաշ-  
խարհս յանկերպարան նիւթոյ. — ինուս. ժա. 18: \* Ա-  
կայն և զայն իշխեցին իշխանութիւն լինէն. — սգուն:

### Ապառն. Է:

Ռայք որք ասին հինգերորդ հորդի, յը որք ունին զնը-  
շանակութե պատմողական, (այս է՝ պատմելոյ, կմբ խորհլոյ)

ինչ զայլԱ), առնուն զ խնդիր պատմական։ կը, \* Պետ-  
հայուս կշռով զանպատումն զօրուի։ — սեբեր ա։ \* Նը-  
րեշտակիք զնմանե իւսին պարժանոք։ — հայ ժ. 24։  
\* Օսահմանակից ազգացն զէիր-շան։ — գէորգ. էսոյ, Է։  
\* Օորոց և ոչ մի ոք յանձին կարաւ մատենադրել։ —  
իսր. ա. 2։ \* Ո՞չ ապաքէն զայս ամ առակ զնման, առ-  
իւսուն։ — աճ. ա. 6։ \* Մի խորհեունիթ չար զումմէքե։ —  
Հոք. հոք. Է։

Ամանք ըստ յարմարութեան առնուն զպատմական։ կը,  
\* Արք անօրէնք հուր հարին զքաղաքե։ — առաջ. Էթ. 8  
\* Հանիցն արաւուն չար զձէնջ վո՞ որոււյ մըրդոյ։ — շուն-  
շ. 22։ \* Գրէր և կնքէր զերդումն, և իսպէր զաւետա-  
լանեն։ — էլիւ դ։

### Առանձ. ա.

Տայ ը՝ որք ասին Աէցէրրէ հոքէն, կը որք նշանակեն  
զգործողուի առակելոյ զիմն իւսիր՝ իբր գործեօք, կմը իբր  
միջուրդօք, առնուն զ խնդիր գործիական։ կը, \* Լ ծա-  
կօք իմն կշռէր զիւր և զամենեցուն կենցաղս։ — յաշնան-  
իւր. \* Կերակրեցին զնոսա քաղցրութեամք բանին ձըշ-  
մարտութեան։ — իգն. ժ. 1։ \* Օ ի որով պատժե-  
ցեր զհակառակորդուն, հովին զմեղ առքեղ կոչեցեալ հո-  
ռառքեցիւր. — ինսպ. ժը. 8։ \* Օ անազան ծաղկօք զար-  
դարեաց զերկիր. — նուսոյ. ժ. 57։ \* Շառագայթիւք իւ-  
րավուք լուսաւորէ զնմ տիեզերս. — էլիւ Է։ \* Որ առա-  
տապէս սերմաննէ, լնու բազմապատիկ աձմամք զգիրկս իւր  
որայիսքն. — շնորհ. նշն.։

Ամանք ըստ յարմարութեան առնուն զգործիական։ կը,  
\* Եսվաւ ուսանին իշխանք նոցա զմարդասիրուի — էլիւ-  
ը։ \* Ա արեսցէ զաշխարհս սրբուիք և արդարուիք. — ի-  
նսպ. թ. 5։ \* Օ ըմպելի իմ արտասւօք խառնեցի. —  
առաջ. ճ. 40։

Վ. ՅԼ զիտելի է, զի որովհետեւ գործողուիք հորկօ-  
րէն իւսիր կատարին, բայք վասնշանակելոյ զգործողուին՝  
գրեթէ առհորդի կարեն առաւու զխնդիր գործիական, մա-  
նաւանդ անցողականքն. որոց վո՞ ոչ է հարկ տաւ օրինակու

## Առան. Հ:

Իւայք՝ որբ ասին էօնեցորդ հոքի, ո՞ր որբ Դշանակեն ըզ-  
ներգործել իրիք շուրջ զայլավ, առնուն զիմողիր պարա-  
ռական. և սոքա են սակաւ յոյժ. ով, \* Որ սիրեն, զօրէնս,  
պատեն զինքեամբք պարիսպ. — ուստի. Էթ: \* Ըստ ըջ փա-  
կեալ զպարապաւ զբուռոք քաղաքն. — ուստի. ուշի: \* Օ աչ-  
սըն իւր յածեալ զբազմականօքն. — 'ի նոյնն. \* Օ ի՞  
զանցուցանես զքե զպարգես արքայունե երկնից. — ուշի-  
շինենու. Հ:

\* Ոմանք մանաւանդ թէ բազումք՝ նոյնարուն առ-  
նուն զիմողիր պարառական. ով, \* Օ ամ վնասս զիւր գոր-  
ծոցն զիսորհրդակցօքն արկանէր. — Եղիւ. Հոռոշութ. Գ:  
\* Իսկ զգօսացելովքն, որ 'ի հաւանութիւ ոչ կամին գալ,  
սփուեցէ զանձրե փայլատականցն 'ի կիզուլ. — ուժունենի:  
\* Ոչ սակաւ խուժան աւերանայ զաշխարհան զեզյը. —  
յանց. հուն: \* Օ զօրս իւր զթիկամբք թողեալ, և ընտրեալ  
արս իբրև Շմայն՝ գան հասանեն 'ի ձորափոր. — նոյնն.  
\* Օ զլխոյն մորթն զերեսօքն դարձուցին. — Է. Տաէնդ.  
Է. Հ:

Գիտելի է, զի ոմանք 'ի ներգործական բայից ըզ-  
պարառական ինողիրն այնպէս սեփականեն ինքեանց, մին-  
չե 'ի տեղի ինողը սեռի առնուլ զայն. ով, \* Ո՞ի ոք  
յանմտաց այպանիցէ զբանիք մերովք. — շնորհ. շնորհ:  
\* Որ քամահէ զընչիւք, անտրառում կայ. — նեղու. \* Փա-  
զաքշէք զպօշոսիւշ՝ տալ նմա արծաթ. — ճոռընդ. \* Որ  
հաւատայ պատժոյ մեղաւորացն, և փառայ արդարոցն, և  
զիմաստուն 'ի գոլծ ածէ, նշկահէ զմեզօք. — լոճ. ուղ.  
Զժը. 60:

Գիտելի է ևս, զի երբեմն ներգործական բայք ինչ՝  
(մանաւանդ բայս առնեմ,) վասն յարելոյ 'ի պէսպէս ան-  
ուանս՝ իբր յանորոշ հայցականա՝ որովք իբր մի բայ վա-  
րին, պոնուն զիմողիր 'ի պարառական հոլովն. ով, \* Ե.  
պախտ արարին զբանիք հրամանաց իմոց. — յուրիւ. Է.  
Տ: \* Ո՞ի զանց արասցուք զմերով փրկութեամբս. —  
ուժի. Է. ուշի. Գ: \* Ոչ երբէք անփոթ արարեալ զքո-

յովն խրատու, այլ խնամ տարեալ հոգացայ թմի. — Էսէ.  
Տ. 8:

### Ապահով. ը:

Ի՞այք՝ որք ասին առնեքուր իսքգի, ի՞ որք ունին զնը-  
շանակուի առնելոյ կմը ունելոյ ինչ յիմիք 'ի ներըս, առ-  
նուն, զինդիր ներգոյական. կը, \* Ո՞իցո՞ք զգանձս մեր  
յերկինս. զի յորժամ երթայցեմք անդ, բացցուք և ուրախ  
լիցուք. — Ֆծ. զ. \* Ո՞ի պահեացես 'ի գանձարանիդ ըգ-  
նիւթեալ իմ պարտուցս անօրենութ. — Նոր. իը. \* Որ կա-  
մաւ կուրութ յիքն կըէ, ոչ երբեք կարէ նա գալ յա-  
ռողջութ. — յահն. իոն. \* Ե. յլ գիտեմ զձեզ թէ զսէրն  
այ ոչ ուրիշ յանձնան. — յահն. ե. \* Օ կոյրն թէպէտ և  
յոսկի համակիցես՝ ոչ ինչ զգայ, և նոքոք ոչ ամբարտաւա-  
նէ. — սոք. ս. յահն. գ. չեռագր. \* Օ հոգին կենդանի  
'ի նմա տպաւորէ. — լոյն. սահն:

Ամանք նը յար: որութեան առնուն զներգոյական. կը,  
\* Օ այնչափ չարչարանս բերէր 'ի մարմին. — գոհն լուս-  
\* Ե՞ հրահանգս կրթութ վարժեցին զնոսա. — եղել. ը:  
\* Պարարեցաք զանձինս մեր 'ի զանազան խորտիկս. —  
նոյնն. իբու:

### Ապահով. ը:

Ի՞այք՝ որք ասին իննեւրուր իսքգի, ի՞ որք հշանակեն  
զներգործել ինչ նը պարագայինք իւիք, առնուն զինդիր 'ի  
ձեռն նախադրուեն. կը, \* Ո՞ի նը ստուերի այսր մթութե  
զանձառլիդ լոյս փոխանակեր. — Նոր. ի բանն. իը. \* Տուն  
նը տուն կցեմք. և ագարակ նը ագարակ խառնեմք. — Վե-  
ցը. ե. \* Օ իւր կամսն, ոչ միաբանեաց նը կոմացն այ. —  
սոք. ս. ուսու. ը: \* Եթէ ցանկալի է քեզ նը նոսա (յո նը  
սուրբս) թուել զանձն քոյ, սրբեա զնա նը պարզեացն քի. —  
տերեր. է: \* Օ հոգս կեցաղցա կուտեմք 'ի վերայ ար-  
ձանց. — լոյն. սող. իը. \* Կրծակը զատամնւնան 'ի վե-  
րայ թագաւորին գագկոյ. — յահն. իոն:

Իսաղում բոյք ևս նը յարմարուեն առնուն զինդիր 'ի  
ձեռն նախադրուեն, կը \* Ե՞ վերայ աւազոյ շնուածս յի-

մարուե կառ ուցիս. — Դար. Է: \* Եւ զդուռն ձգեաց (դովա) զկնի իւր. — Ծննդ. Ժ: 6: \* Խակ կէսըն. . . զմահ քան ըդ-կեանս ընտրեին. — Էլ. Հ: \*

Վ. Յ. Գիտելի է, զի գրեթե ամ բայք կարեն առ-նու ղինողիր ՚ի ձեռն նախադրուե պէտպէս օրինակաւ:

### Անոն. Հ:

Ենցողական բայք հասարակօրեն զայնպիսի խնդիր բը-նուե առնուն, զորպիսի պահանջեն բայքն յորոց բղիւն. զի, \* Յեցուսցուք զդրուեալ եկեղեցի մեր ՚ի գաւաղանն երկաթի. — Լմ. առն: \* Շանապարհի նմանեցոյց զար-դարունն. — Էռուն: \* Խմնարհուն զանձ ՚ի մարդիկ խո-նարհեցոյց, և զմարդիկ ՚ի խոնարհուն յերկինս բարձրա-ցոյց. — Առք. Ա. պէտ. Է: \* Անհնար է զրկողին ողորմունի գտանել յայ՝ եթե զզ ըկանսն ՚ի զըկեայն ոչ դարձու-ցանէ. — Նոյնն. յոէ. Ժ: \* Որպէս անցոյց և ընկերան իւր՝ նոյն անցք անցանեն և նա. — Տն. ճ. Ճ: \* Որ ախ-տիցն՝ յօժարուն տուեալ տեղի . . . խնամով թաքուցանէ յինքեան զխմնըն չարուե . . . ոչ է, և ոչ ասի սուրբ այն-պիսին. — Հարդ. Հնդ:

### Անոն. Հ:

Բայք բարդք և բաղադրեալք, թէ ուրգործականք և թէ չեղոքականք, որոց նշանակուն չիցէ և ամի փո-փոխեալ իր. ՚ի բազումս զայնպիսի խնդիր բնութեն. առ-նուն՝ զորպիսի պահանջեն ՚ի պարզ գոլն իւրեանց. զի, \* Օ ամ բարեաց զտիպսն և զօրինակուն փութասջիք յան-ձինս ձեր նկարագրել — Հարդ. Հնդ: \* Ուրակոչեաց յորդեղբուն զտիեղերա. — պատը. Ք: \* Անհնապանդի անձական հրամանին՝ մտարերէր ՚ի չարիս. և անտի լի-նէր սկիզբն չարեաց. — Էլուսէ Ժ: \* Ասմա նմա զպինւ արդարուցն . . . զի առ յոյս քաղցրագունից՝ ՚ի բարիան ձեռնարկեսցէ. — Առք. Ա. պէտ. Ա. յարդ:

Խակ որք զայլ խնդիր առնուն՝ վերաբերին ՚ի հշանա-կունս այնց բայից, զորս եղաք և դնելոց եմք յայլ կանոնա-

Վ. Յ. վասն բայից՝ որք բարդին ՚ի բառիցս բանէմ և հուն, զիսուլի է. զի սոքա առ հասարակ երեմն իրը

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՎԱՐԻՒ, և ԵՐԲԵԹՆ ԻՐ ՏԵՂՋՐԱԿԱՆ: ՅՈՐԾԱՄ ԻՐ ԻՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՎԱՐԻՒ, ՀԱՍԱՐԱԿՈՐԵՆ ԱռԴԱՌՆ ՊԼՄՆԴԻՐ ԲՆՈՒԵ ՚Ի ՀՈՂՈՎՆ ՄՐԱԿԱՆ: ԿՐ, \* Օ ԺԱՐԲԻՇՅԱՄ ԿՈՒԵՆ ԵՐԵՒՔ ՈՉ ԽՈՐՃԻ ՊՈՂՈՍ ՓՈՔՐԱԲԱՆՆԵԼ մԵՐ. — ԳՐԻ ԷՒՆ: \* ՅԱՐԱԼՈՒՐ ԱԿԱՆԾԱ ՈՉ ՈՉ Ե օԳՈւՇ ԽՆԾ (ՊԱՐԴՈՐԱՄԱՆ) ԵՐԿԱՐԱԲԱՆԵՐ, ԱՅՆ ՊՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔ. — ԽՈՎՐՎԱՎ:

Իսկ յորժամ իր տէղոքական վարին, ըստ ինքեան պահանջեն զիսնդիր ՚ի հողովն պատմական. կր, \* ՈՐ ՀԱՐԱԽՈՍԵՍՔ ՊՀՕՐԵ ԿՐՄ ՊՄՕՐԵ մահու վախճանեսցի. — Տարի. է. 10:

### Առանձ. չը.

\* ԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԲԱյ քս՝ Շ-ՀԵՄ. առանձ. շինեմ. լու, յորժամ յարին յայնպիսի անուանս, որք ունին զնշանակուն չափմանց. որպէս յայնուե, երկայնուե, կանգնոյ, կշոռյ, լու, առնուն զնոսա իր երկրորդական խնդիր ՚ի պէսպ հոլովա:

ԵՐԲԵԹՆ ՄԱՆԱւԱՆԴ թէ բազում անգամ յուղ դականն. կր, \* Եւ չափեաց զերկայնուն նորա քառասուն կանգուն, և զլայնութին բան կանգուն. — էպէն. իւ. 2: \* Երար բարձրուն պարսպին հ կանգուն. — յուդին. ա. 2: \* Եւ շինեաց ն կանգուն . . . զմի կողմանոցն. — գ. Բագ. չ. 16: \* Եւ քեզ . . . հիրիկ հինգ հարիւր սիկղ. — ելեց. լ. 24:

ԵՐԲԵԹՆ ՚ի բացառականն. կր, \* Եւ չափեաց զորմ տաճարին ՚ի վեց կանգնոյ, և զլայնուն կողման տանն ՚ի չորից կանգնոց. — ելեց. իւ. 5: \* ՚Ն տասն կանգնոյ զերկայնուն միոյ սիւնակին առնիցես, և ՚ի միոջէ կանգնոյ և ՚ի կիայ զթաճաճրուն և զլայնուն միոյ սիւնակին. — ելեց. իւ. 16: \* Եւ նեցուկք ՚ի ներքոյ նորա՝ շուրջանակի պատեին զնա ՚ի տասն կանգնոյ. — գ. Բագ. է. 24:

ԵՐԲԵԹՆ ՚ի գործիականն. կր, \* Եւ չափեաց հազար չափովն զուխսն. — էպէն. իւ. 5: \* Եւ միջ ձիթենեաց հիմենեաւ միով. — ելեց. լ. 24: \* Եւ գողեալք երեսուն և երեք կանգնովք պատեին զնա շուրջանակի. — ա. Բագ. է. 25:

ԵՐԲԵԹՆ յուղղականն և ՚ի նախոդրիւ տրականն միանգամայն. կր, \* Եւ չափեաց զըրահն յերկայնուն ճ կան-

գուն, և 'ի լայնունի հարիսը կանգաւն — Եղէն. Խ. 47: \* Եւ զ կամար սեանցն արար յիառն կանգուն յերկայնունի, և երեսուն ՚ի լայնունի. Գ. Բագ. Է. 6: \* Ը ինեաց խըր-  
ձիթ ՚ի լայնունի ոտնաշափս չորս, և յերկայնունի ոտնաշա-  
փը ութիւն. — Հորժ հորժ. Եղ. 19:

Երբեմն ՚ի գործիսկանն և ՚ի հախորին տրականն  
միանգամայն կը, \* Եւ արասցես զնա կանգնաւ յերկայ-  
նունի, և կանգնաւ ՚ի լայնունի. — Ելիշ. և 2: \* Երասցես  
զնա չորեքանկինի՝ թղաւ յերկայնունի, և թղաւ ՚ի լայ-  
նունի. — ՚ի հոյն. Ել. 16: \* Սորեքկուսի և կրկին գոր-  
ծեաց զտախտակն՝ թղաւ յերկայնունի, և թղաւ ՚ի լայնու-  
թի. — ՚ի հոյն. լլ. 9:

### Ա-Ն-Ն-Ն. Ճ-Գ:

\* Երգործական բայքս՝ Ա-Ն-Ն-Ն-Ն. Գնէն. Վարչէն. ՚ի  
հորչու առա. առէ առէնէն. նո. և ոլք յարին յանուանա գը-  
նոց, առնուն զիմնդիր ՚ի սեռական հոլովն՝ իբր զերկըր-  
դական. զը, \* Ա աճառեցին զ յովսէփ իամայէլացւոցն քսան  
դահեկանի. — Ճնն. լլ. 28: \* Պանեաց զնա իննուսուն  
դահեկանի. — Վարչ հորժ. Ճ-Է: \* Օ որ վարձեաց հ ար-  
ծաթոյ. — Եհէն. Դ-Դ. թ. 4: \* Ո՞չ դահեկանի միոջ սակ  
արկեր լիս. — Տադ. Խ. 15: \* Ստացաւ զվիճակ անդին ...  
Ճ ոչ խարի. — Ճննդ. լլ. 19: \* Բայց թէ կամիս փողոյ  
փողոյ առնումք. — Հորժ հորժ. Ճ-Է:

\* Ե. յաղիսի բայք Երբեմն փոխանակ սեռականի առնուն  
զայլ հոլովս. կմ՛նախաղըրունիս չնդ. կը, \* Օ եղբալը իւ-  
րեանց վաճառեցին՝ լը Երեսուն դահեկանին. — յն որդի:  
\* Եւ վարձեցաւ հոքօք (յի հ արծաթովք) արիմելէք ա-  
րըս սրիկայս և դարհուրեցոցիչս. — Դ-Դ. թ. 4: \* Վըկ  
վարձս մշակացն աւուրն դահեկան. — Տադ. Խ. 2: \* Տու-  
գանեաց զ իս Ճ լիտր սոկոյ. — ՚ի Վարչ սոհ: \* Ստացայ  
ևս զնոսա ՚ի գնոց արծաթոյ. — յովն. իսի:

Խակ բայքս՝ հորիննէլ և զորիննէլ կմ՛ զորիննէլ  
իբր ՚ի բաղումս առնուն զնախորին սեռական իբրեւ լլ-  
ինդիր յարմարական. զը, \* Օ մանկունս ծուեաւ մեզ ՚ի  
քաղղէացւոց սերմանէն՝ զվիժի հարցուք. — լայն. առեն:

Օ ի մի երբէք հարցես զքարի զոտն քոյ. — աղ և  
42. \* Յորժամ հասանէ դեն ՚ի մոլին՝ զգետնի զարկա-  
նէ. — գէռքէ. ի՞ն. \* Յետայետս տարեալ՝ զարկոց զգետ-  
նի. — իսուրով:

### ԳԼՈՒԽ. Ե

#### ՅԵՂԴԻՆ ԵՒՐԵՐԻ ՀՐԱՄԱՆԻ ԲԱՐԵ

**Կ**րաւորական բոյք առնուն զինդիր սեռի ՚ի  
հոլովն բացառական պը, \* Յաղթեցաւ ողօրմունին յար-  
դարութ. — լմբ. առեն: Ուր կրաւորական բայս յողնեցու-  
առեալ է խնդիր սեռի զբացառական հոլովդ յուրաքանչե-  
խկ ողործունին է անուն բայիս յողնեցու:

Բոտ այսմ և հասարակ բայք՝ յորժամ կրաւորա-  
կանաբար վարին, առնուն զինդիր սեռի ՚ի բացառական  
հոլովն. պը, \* Պետրոս՝ վէմ դաւանեցաւ յածեղէն բերա-  
նոյն. — նմբբին. Վեճանուող. ճռ գուգիւնեն:

Բայց գիտելի է, զի բազում անգամ կրաւորական  
բայք ևս և հասարակք զօրութ ունին զինդիր սեռին. պը,  
\* հանապազ ձաղին, և ոչ երբէք խրատիմ: — նոր. ի՞ն:  
\* Շագունն փառաց ՚ի բեթղէհէմքարողի. — ուշ. ուշա:  
Ուր զօրութ կոյ բացառական հոլովս՝ ՚ի հռչաւոց:

Երբեմն ևս կրաւորական բայք իբր չեղոքական վա-  
րելով՝ ոչ պահանջեն դիմուն զինդիր սեռի. պը, \* հաւատով  
հասաւատի սերն ձշմարիս. — հծն. ի:

Գիտելի է դարձեալ զի կրաւորական բայք երբեմն  
փոխանակ բացառականի զայնպիսի խնդիր առնուն, որ լը  
խիք համարի նոցա այն իբր խնդիր սեռի. պը, \* Չարն  
բարեաւն յաղթի, և ոչ չարեաւն. — փոխանակ ասելոյ, ՚ի  
բարոյն՝ և ոչ ՚ի չարեն. — լմբ. առեն: \* Կշանակեցաւ  
անմեղութն քի պարտականն մեղաց աշխարհի. — փոխա-  
նակ ասելոյ, յանմեղութն քի. լմբ. հաւատ: \* ՚Ի խէթ-  
խղ ձիս խոցուտիմ: և բոցով շնչոյս ձենձերիմ: — փոխնկ  
ասելոյ, ՚ի խիթմանէ խղձիս, նոր. նոր. ի՞ն:

Խակ թէ զորպիսի խնդիր բնուե առնուն կրաւորական  
բայք, ոչ է հարկ գըել լինչ. զի զայնպիսի առնուն՝ զոր-

պիսի պահանջեն ներգործականը իւրեանց. թէպէտե հազիւ ուրեք իւր կրաւորական առնուն զինդիր բնուե, ոյլ իւր չեղոքական դր, \* Այս ոչ փոխի ՚ի խաւար, այլ զիսաւարն ուստառը. — յաճեա, զ: \* Առագաստին թըռչարան յանկարկատելի ծուենս պատառեցաւ. — նար. ՚ի բանեն. ՚եւ: \* Ես ծանուցեալ եմ ինձ, և ոչ անծանօթ յիշեն. — շնորհ. մշլ:

### Գ. Ա. ՈՒ Խ. ԵՎ.:

Յ-Ղ-Հ- Խ-Ն-Դ-Ր-Ր- Հ-Ե-Ղ-Մ-Մ- Բ-Ա-Յ-Ե-Յ-:

**Զ**եչոքական բայք թէ ներգործակերպք և թէ կրաւորակերպք՝ ոչ առնուն զինդիր սեռի, այլ զբնութենի պէսպէս հոլով: Եւ որպէս ասացաք դներգործականաց, սոյնպէս և սոքա չորեքին առնուն զինդիր:

՚Եախ՝ զինդիր բնուեն ըստ հնէնեն, որ և ասի՞ բան էնդէր. յա այնպիսի՝ զոր բնուեն բային ՚ի նշանակուեն իւրմէ նախ պահանջէ. որպէս բայս գոմ՝ ՚ի նշանակութեն իւրմէ նախ պահանջէ զնախդրիւ տրական. դր, \* Որ առնե ըցաշմարտուի՝ գայ առ լոյսն. — յանձն. գ. 24:

Երկրորդ՝ զինդիր բնուեն յարհաբանեն. յա զայնպիսի՝ որ դնի ՚ի տեղի բուն խնդրոյ յայլ հոլով՝ քան զոր բընուեն բային ըստ ինքեան պահանջէ. որպէս եթե գոմ բայն փոխանակ առնլոյ զնախդրիւ տրական՝ առնուցու զպարապական, դր, \* ԱՌԻՇԹ զերկրաւ գամք. — իսորով:

Կմ հանդերձ նախադրուի. դր, \* Յանկարծակի գայցէ ՚ի վերայ նորա մահ. — յաճեա. ժեւ:

Երրորդ՝ զինդիր բնուեն երիբորդանեն. յա զայնպիսի՝ զոր երկրորդաբար պահանջէ բնուեն բային. որպէս բայս գոմ՝ երկրորդաբար կարէ առնուլ զբացառական. դր, \* Պայմին առնա յամ կողմանց. — մարդ. ո. 45:

**Չ**որրորդ՝ զինդիր բնուեն պատշաճի բնուեն. յա զայնպիսի՝ որ ըստ ինքեան ոչ պատշաճի բնուեն բային, այլ ըստ պատշաճազուեն. որպէս եթե գոմ բայն ըստ պատշաճման առնուցու զինդիր ՚ի հոլովն գործիական կմ նախադրուի. դր, \* Կամաւորութե-

Եկիր 'ի չարչարանս. — շոր. հ: \* Շաղում հիմարդունք վասն մեղաց գան. — գէռգէ. գ:

Խոկ առ 'ի որոշել՝ թե չեղոքական բայքյոր հոլովս առնուն զինդիր բնութեան և ինքեան դիցուք զմետասան կանոնա հանդերձ օրինակօք ինչ. յորս յարեսցուք և զօրինակս խնդրոց յարմարականաց:

### Առան. ա:

Շեղոք ական բայք ոչ առնուն զինդիր բնութե և ինքեան յուղական հալովն, այլ՝ երկրորդաբար միայն, կմ և պատահման, և կմ և յարմարութ. և այնք ևս սակաւ. պ, \* (Օրէնք ածային կացցեն թագաւոր, 'ի վերայ ամի — էլէլ. գ: \* Ինդէ՞ր (ով արծաթասէր) կռապարիշտ և ագահ մոտանիցես 'ի գերեզմանն. — սսրդ. յ-ի. ու յորդ: \* Ո ո զի կեղծաւորութ է, որպէս 'ի տեսարանան ռամիկ դոլով (ոք) թաշաւոր կերպարանի. — նայն. ո. պէս. գ: \* Ուստութ է (սատանայ), և ձշմարտութ ձեանայ. — նայն. ո. պէս. ժ-ի: \* Մարմին դարձաք և զմարմնոյ իրա սիրեցաք. և զկնի մարմնական իրաց ընթացաք. — էսորմ: \* Լատացեալք և մարմնոյ՝ գտաք չնչաւորս. — լայն. սորմ:

### Առան. բ:

Շեղոքական բայք՝ որբ ունին զնշանակութ հետեղական կմ հաղորդական, առնուն դվերջահոլով տրակառ. պ, \* Օ տրունի պատուէրն լքեալ թելադրութ օձին հետեւիմ: — նոր. յէ բան. հ-ի: \* Ծառայեսցէ անմիտն իմաստնոյն. — սոսէ. ժ-ի. 29: \* Հաւասարեսցէ մահս մեր մահուան արդարոցն. — էլէլ. ի: \* Այս ամ չարիք յաջողեցան նմա. — էլէլ. դ: \* Կարօտիմ գերեզմանի, և ոչ հասանեմ: — յուն. ժ-ի. 4: \* Իներան անխրատից տեղեկանաց չարեաց. — սոսէ. ժ-ի. 14:

Ոմանք և յարմարութ առնուն զվերջահոլով տրական. պ, \* Ը թունք քահանային զգուշացին գիտութ. — նոր. ի. 7: \* Ծանրասցի գործ մարդկան, և այնմ հոգասցեն. և մի հոգասցեն 'ի բանս տարապարսո. — էլէլ. ի. 9: \* Կացաք մնացաք իրաւանց, և ոչ եր. — էսոյ. ծ-ի. 11:

## ԼԱԽՈՂ. Գ:

**Սէզոքական բայք՝** որը ունին զնշանակութիւն առ այլ  
(պ որք ցուցանեն, իբր զբերումն առ իմն, առնուն զնախ-  
դրիւ տրական. պ, \* Պահաց մախող ՚ի տուն իւր յաւիտե-  
նից. — Ճաղանձ. Ճ. 5: \* Որյուսայ ՚ի մեծութիւն, կործա-  
նեցի. — Առաջ. Ճ. 28: \* Քանձն չարարուեատ իմաս-  
տուի սչ մոցէ. — Խառագ. Ա. Կ: \* Մարդ հայի յերեսա  
և ած հայի ՚ի սիրտս. — Ա. Խառ. Ճ. 7: \* Մի նախան-  
ձիցիս Շանապարհս անօրինաց. — Առաջ. Դ. 14: \* Ու-  
այնքան ուրախանան՝ յառեալ մեծութիւն՝ որքան տրտմին ՚ի  
պակասեալն. — Առաջ. յայ. Է:

Ոմանք ըստ յարմարութե առնուն զնախդրիւ տրական. պ,  
\* ՚Ն պատուիրանս քո հոգացայ. — Առ ճ. 45: \* Մի  
փարիր ՚ի գիրկս, որ ոչ քո իցեն. — Առաջ. Է. 20: \* Ու-  
շափ դեկերիմք առ քեզ ախործես. — Եռաբով

## ԼԱԽՈՂ. Դ:

**Սէզոքական բայք՝** որը ունին զնշանակութիւն յայլմէ,  
առնուն, զխնդիր բացառական. պ, \* Վարդարհաւածել...  
վրիպեցաւ ՚ի փառացն. — յաճախ. Բ: \* Օերծաք ՚ի մա-  
խանացն գերութիւն. ապրեցաք ՚ի ծառայեցուցիչն ոխակալու-  
թիւ. — Ամբ. ապեն: \* Վամիտքն ոչ ՚ի յանդիմանութիւն այլ  
՚ի տանջանացն երկնչին. — Գեռք Ճ. Պ. ՚ի հին. Էսոյ. Գ:  
\* Պատրանօք նախաստեղծին մերկացաք ՚ի լուսոյն. — Հոր.  
Ճ. Գ: \* Ութափեսցուք ՚ի խելագարութիւն. — Առաջ. Ա. Պէտ.  
Հ. յորդ:

Ոմանք ըստ յարմարութե առնուն զբացառական. պ,  
\* Հա-  
ւաստացելքն ոչինչ երկմտութիւն թերահաւատեին, յառաջին  
խրատուէ աբ վերպետացն իւրենց. — Էղեշ. Բ: \* ՚Ն բա-  
րեաց գործոց և ՚ի հաւատոց հեղգացան. — Ամբ. անդեն:  
\* ՚Ն բազում փայտից դռարթանայ հուր. — Առաջ. Էպ. 26,

## ԼԱԽՈՂ. Է:

**Սէզոքական բայք՝** որը ունին զնշանակութիւն գոհանալոյ,  
կժ տրանջելոյ, առնուն զխնդիր պատմական. և սոքա են  
սակաւ յոյժ. Ըստ կարե դասիլ և բայս հագու. պ, \* Պա-

հասցեւք միշտ զառատ ողորմութեանորա. — իսու. • Ույթ տրանջենն զնի ... թոյլտայ կըեւ չարչարանս. — շնորհ. թշն. • Վիրթմանջեն զքէն, առ պարապօքն. — ենէդ. լգ. 30. • Օպյոսիկ գըելով զամանէս դատախաղեմ. — սոբէ. յոհ. է. յորդ. • Ո՞վ թէ որքան տժգոհ լինի զնոցամէ ած. — լմբ. դադ. • Օքառաց ինչ ոչ հոգային (սուրբք). — սոբէ. բ. պէտ. ա.

Ամանք երկ բորդաբար և շն յարմարութեանուն զպատամական. պը, • Օկատարածէ աշխարհիս անարկէ. — գեռէդ. լու. • Ենորդէր առաւելքանն զնմանէ. — զոհի. է. 45. • Դառւ և ժողովուրդ քո գումարեալէք զնի. — բառ. ծըլ. 41. • Լուելն զնծ գիտութիւն անհնարին կորուստ. — սբունուստ.

### Անոն. զ:

**Չէղոքական բայք՝ որք նշանակեն զգործողութեանիք լինելի, առնոււն զիմնդիր գործիականս. պը, • Վոյովքով վաստակօք պէնեցայց. աւազանին զգեստիւ պերձեցայց. — նոր. էն. • Եւ սակայն ակն նորա ոչ յագի մեծութեք. — ժողով. դ. 8. • ( )ը շն օրէ աւուրք կենացս նուազին. զի բուսանիմք ՚ի պատանեկութե. ծաղկեմք երիտասարդութեք. թարշամեմք ծերութե. չորանամք մահուամք. — լմբ. սոբ. յն. • Ճառագայթիւք աղօթից նորա պայծառանայ. — երկն. • Յաւօք վարակեալ եմ. — յոհ. լ. 14:**

Ամանք շն յարմարութեանուն զգործիականս. պը, • Եթէ որդովդ պարծիս դու, գերի վարին նք 'ի քէն. — հծբ. է. • Մեք զնմմ հաւաստի ուսաք, և տակաւին ևս կորստեան ձանապարհաւ գնամք. — իգն. չգ. 28. • Դակ որք առեանն զ յանդիմանութիւն, վախճանեսցին անարգանօք. — սոբէ. չէ. 10. չեռագր:

Այլ գիտելի է, զի որպէս ասացաք զներգործական բայից նոյնպէս և չէղոքական բայք՝ գըեթէ առհասարակ կարեն առնոււ զիմնդիր գործիական:

### Անոն. է:

**Չէղոքական բայք՝ որք ունին զնշանակութեան շուրջ զպիով, առնոււն զիմնդիր պարառականս և սոքա են սակաւ**

յցժ. պր, \* Անկեալ՝ ՚ի վերայ փարելն զպարանոցաւ հուրա. — Հ-ը հարց. ծդ: \* Ոչ պատեցին ղինե մառախուղք ՚ի ձօնելն զքեղ. — Կար. Է: \* Աչք անմտի զվայրօք յածին. — Ա-ի. ծէ. 24: \* Խակ այս պատիւ, որ սորայս է, գերազանցեաց զամենեքումբք. — Ա-րդ. Ա. պէտ. Ա:

Ոմանք ըստ յարմարութե՛ առնուն զպարառական. պր, \* Ծիծաղին զինե յետինք, — յու. և. 1: \* Խորհուրդք բարեաց զգուշացին զքե. — Ա-սէ. Է. 4: \* Սպառնաւ մահու անցին զնոքօք. — Էլիւ Շըրտաղետ. ը: \* Եակ զամօթ արհամարհէր, և զերկիւղիւն ՚ի վեր ելաներ. — Քրիդոր. Է-ի:

### Ա-նոն. ը:

Չեղքական բայք՝ որք նշանակեն զգործողութիւնի կիմիք կի՞րուրեք լինելի, առնուն զիստիր ներգոյական. պր, \* Ոչ մնաց ՚ի սահմանեալ ուխտին՝ որ ՚ի մէջ նոցա. — յունա. է-է: \* ՚Ն յոտս հաստատիմ; և ՚ի միտս տատանիմ: — Կար. համ. \* Աթէ յիս բնակէ (հոգին սուրբ), կենդանի եմ ես. — Ա-ի. Ա. 2: \* ՚Ն սիրտ առատ հանգչի իմաստութի. — Ա-սէ. ծդ. 33: \* Ուք ՚ի մարդս և յաղբերակունս և ՚ի սր օդս զբօնուցուն, սրատեսք և քաջահոյեացք լինին. — Քուրով. \* ՚Ն մշտնջենամնուունչ սաղմնսս համակէր. — յունչ. է-է:

Ոմանք ըստ յարմարութե՛ առնուն զներգոյական. պր, \* Ուրեմն արդարանայ ՚ի բանս իւր առաքեալ. — լամբ. առէն: \* Յանձանձըոյթ աղօթս նահատակէր. — յունչ. է-է: \* Ուր բարձրացար ՚ի խալին վը ազգի մարդկան. — լու. ծդ:

### Ա-նոն. Է:

Չեղքական բայք՝ որոց նշանակութին նկատի ՚ի պարագայս իրիք, առնուն զինոդիր ՚ի ձեռն, նախադրուեց. պր, \* Յորժամ բռնութե կուռեսցուք ըստ աշխարհիս, աշխարհս ՚ի բաց քանդի. և մեր ՚ի պատուհասէ չապրինք. — Էլիւ գ: \* Խաղոյյր ըստ խահակայ որդւոյ իւրում. — Ճնն. է-ա. 9: \* Աթթ նախ հաշտեաց ըստ եղբօր քում. և ապա եկեալ մատուցիր զպատարագն քո. — Տառ. Է. 24: \* Հեծեծեսուք ՚ի վերայ վերալից հոգւոց. — Ա-րդ. Ա. պէտ. Ժ յուրդ:

- \* Տմագաւորել ՚ի վերայ պարթեաց արշակ քաջ. — Էտ. բ. 2.
- \* Հովլանասցի աջ քո տէր ՚ի վերայ ստեղծուածոց քոց. — շու. էլ.

Իւազում բայք ևս որպէս ասացաք զներգործական բայից՝ ըստ յարմարուե առնուն զինդիր նախադրութեա. նը, \*

- \* Հաւետ մերձեցաւ ՚ի վը իմ արքայունն ոյց. — նոր. ա.
- \* Օ իջանհի ես զինի տկարուե նորա. — վահ հոր. է.
- \* Ճենչացան զհետ երանաւէտ ձայնին. — շու. ճէն:

Վայլ գիտելի է, զի որպէս ասացաք ՚ի խնդրառուե ներգործական բայից ՚ի հանոն. Ա. ամ բայից հնար է առնուլ զինդիր ՚ի ձեռն հախադրուե՝ կմբ ըստ յարմարուե և կմբ ըստ պատահման. որոց վահ ոչ է հարկ յանախել օրինակու:

### Լիտոն. ժ:

Իւայք չեզոքականք, կմբ որք իբր չեզոքական վարին, յորժամ յարին յանուանս աւուրց և ժամանակաց, առնուն զնուսին խնդիր փոխանակ ներգոյականի ՚ի հայցական հուլին՝ իբր զինդիր պատահական, կմբ երկրորդական. նը,

- \* ՚ի հազորդուէն զամ մի ողջոյն, և զես բաղումս հրաժարեն. — շու. նէն. դուռ Ուր հայցական հոլովքա՝ զո՞ ՞ ողջոյն. և զես բաղումս՝ են պատահական խնդիր չեզոքական բայիս հրաժարեն: Բատ այսմ է տեսանել և ՚ի յաջորդ օրինակուդ:

\* Ասատկանայր գործ պատերազմին դառնուե դերկուս ամս. — էղիւ. Վեպ. Գւ չ: \* Ը ըջեցաւ յաշխարհի կատարիչն ամի զամն Շ. — շնորհ. ընդհ: \* Ա առեցան կազմեցան զդիչերն ամ. — էղիւ. Գ: \* Դառ ես՝ որ բաւես ընձեռել սիրտ այլ, և ճանապարհ մի երկնչել ՚ի քեն զրովանդակ կենացն սահման. — նոր. լ:

Որպէս զչեզոքականաց ասացաք, սոյնովէս իման զներգործականաց և զկրաւորականաց, ևս և զէականաց. դի սոքա ևս ՚ի յարին յայսպիսի առուանս՝ առնուն զնոսին ՚ի հայցական հոլովին. նը, \* Աեցցէ առան իմ, օրհնեցէ զքեղ զամ աւուրս կենաց իմ: գ. — շու. ճէն: \* Պատուէր հրամանի տուեալ աշխարհին՝ զողջոյն ամիսն քաղոց պահօք և աղօթիւք առնել խնդրուածս առ ած. — էղիւ. Գ:

\* Սւ տը ած մերժեաց զքուն յարքայէ զգիշերն զայն. — Է-Բ-Ե-Շ. Վ. \* Փակեցան երկինք զերիս ամս և զվեց ամիս. — Ա-Շ. Դ. 25. \* Պետրախոշտիք լինելին զ ինն ամ և զվեց ամիս. — Է-Լ-Է-Ն Հ. Հեռագիր:

Վայսիսի խնդիրք բաղում անգամ առաջ դայէ դնին. Վ-Պ, \* Ակաց (յուսիկ) 'ի հայրապետում ամսն Պ. — յունի. Խ-Յ-Ն. \* Կուուեցան տարի մի թ աղուանից արքայի. — Է-Ղ-Է-Ն Հ. \* Տիտոս ինն ամիս պաշարեց զեհմ: — Կոտոր. Խ-Դ. Հ-Դ. 22. \* Աւելին 'ի տապանին ժեք ամիս և ժ օր. — Տնչ. Ճ-Ա-Ն. Ժ-Շ:

Վ-Ջ-Լ աստ գիտելի է, զի որովհետեւ այսպիսի խընդիրք ունին զզօրուի ներգոյականի, բաղում անգամ 'ի ներգոյական հոլովն դնին. մանաւանդ 'ի դասական անուանս, և յայնս՝ որք հանդերձ յատկացուցչաւ դնին. Վ-Պ, \* Հ-Յ-Ա-Ն աւուրս քառասուն երեելնոցա. — Գործ. Ա. Յ. \* Հ-Յ-Ա-Մ գիշերի զոգիդ 'ի քեն 'ի բաց պահանջիցեւ. — Ա-Ր-Ի. Ժ-Բ. 20. \* Յ-Բ-Ն-Ե-Ր-Դ ժամնուն ետ զհոգի իւր 'ի ձեռս հօր. — Տնչ. Ժ-Դ. \* Յ-Ա-Մ-Ն-Ե-Ա-Ն չորրորդի եկին հասին յաշխարհն հայոց. — Է-Ղ-Է-Ն Գ:

Գիտելի է ևս, զի այսպիսի խնդիրք երբեմն դնին նաև յայլ հոլովս մանաւանդ 'ի պարառականն. Վ-Պ, \* Օ ինն ժամաւն գոչեաց յն 'ի ձայն մեծ. — Տապ. Հ-Շ. Ա-Յ-Ն. \* Ո-Ղ-Հ-Ա-Ր-Կ գիշերաւ ես մտից 'ի մեջ եգիպտոսի. — Է-Լ Ժ-Ա. Կ: \* Աւ այնպ կայր մինչեւ ցվեց ժամս 'ի պրկանոցն. — Է-Ղ-Է-Ն Հ:

### Լ-Ա-Ն-Ն-Ն. Ժ-Ա:

Բայք չէ զոքականը՝ ես և կրաւորականք յորժամ յարին յայնապիսի անուանս՝ որք են արմատք կմբ ածանյեալք յայնց բայից, իբր 'ի բաղումն առնուն զնոսին 'ի հայցական հոլովն իբր գործիական. Վ-Պ, \* Լ-Ձ-Է կամիս ուլ մարդ մեծանալ զանկշուելի մեծունի, ես ցուցանեմ զօրինակն. — Ա-Ր-Գ. յահ. Է: \* Օ նոյն նահատակուի նահատակեցաւ և աշխարհս հայոց. — Է-Ղ-Է-Ն Է: \* Օ յուդայեանն և զսիմննենն ախտացայք զախտ. — Է-Ա-Յ-Ն: \* Պատակեցար 'ի թագաւորին զանթառամ զպսակն. — Հ-Շ. Ժ-Ա:

Բատ այսմ լինի և 'ի յարաբերականս արմատոյ բայից. Վ-Պ, \* Լ-Ա-Կ-Ա-Լ-Ցին զահարդանս իւրեանց մոլորութն զոր մն-

լորեցան. — Էղէկ. Էդ. 15: \* Ա կայ լիցին առ տմսն մահու նորա՝ զոր կրեաց մարդկարար, և յարուեն զոր յարեաւ ածապէս. — Էդէ. Էդ. 29: \* Բ նկեցէք յանձանց ձերոց զնմամբ ամբարշտուին ձեր զոր ամբարշտեցայք յիս. — Էղէկ. Ժը. 51: \* Ա մանիրաւուենք նորա, զոր անիրաւեալ իցէ, մի յիշեցին. — Էղէկ. Ժը. 22: \* Տիս ՚ի նմա զփշանիթ պասկին նախատինս, զոր վասն իմ այպահնեցաւ. — Լոմբ. Պատ:

Ա յապիսի հայցական հոլովք արմատոյ բայից՝ դնին երբեմն առանց զ-յէ իբր անորուշ հայցական, կմ՞ իք թող զական. զի, \* Տրտմեցաւ յովան տրտմութիւն մեծ. — յո տրտմութե մեծաւ. յովնան. Դ. 4: \* Խնդացին յոյժ ուրախութիւն մեծ. — Տադ. Է. 10: \* Ո զձուիս այլ ոչ ևս ըդձանայցէք. — Էղէկ. Ժդ. 23:

Երբեմն ևս բայք ի՞նչ վասն վայելչուե և եթ յարեւ յայլ անուանո՛ առնուեն զնոսին խնդիր բնուե ՚ի հայցակին հորովն, վասն ունելոյ զմերձաւորուին ինչ, կմ՞ զվերաբերութիւն առ հշանսակութիւն արմատոյ այնր բային՝ որոյ լեալ է խնդիր. զի, \* Ք աղագս որոյ պէտք ե՞ն զի և զձրագունս գիտուե պայծառ ունիցին, զի մի խաւարեւալք տգիտութե թմբեցին զմեղացն քուն. — Էդէ. Ժը. 5: \* Փոխանակ ասելոյ՝ թմբեցին քնոսվ մեղաց: \* Երքա զծաղըալից երկիւղն ախտանային. — Էմասպ. Ժէ. 8: \* Լ սելիք մեր առ ողջացան զանախտաւորութիւն երկնաւոր. — Էջ էջ. Գորդողէս. շ: \* Ու զնոյնս պարտ էր չարչարիլ թիւ. — յո այնոքինք չարչարանօք չարչարիլ. Ղաւէ. Էդ. 26: \* Երա որ այսմ ցանկայ, յորժամ՝ ՚ի ծայրս թմբ մեծուեն հասանէ՝ զտիրապէսն զուարձանայ. — յո տիրապէս զուարձութիւնք զուարձանայ. Լոմբ. Պատ. Զժը.

Ա յլ աստ գիտելի է, զի և կրաւորական բայս պահանջման երբեմն առաւ զիմնդիր բնուե ՚ի հայցական հոլովն. զի, \* Խակ զպտուղ աղօթից յոմք ժամու պահանջիմք յոյ. — Էստով: որպէս թէ ասեր, պահանջիմք յոյ՝ յոմք ժամ տալ զպտուղ աղօթից: \* Որ բաստուածապատիւն քահանայութիւնն յանդգնեցան, այսպիսի վրէժս պահանջիմքեցան. քանի՞ ապա բիւրապատիկ վրէժս պահանջին՝ որ

'ի տերն քահանայութեան յանդգնին. — սպագի. յառաջին. բ.

Պահտելի է ևս, զի բայքս՝ Պահմէ նըլլամ. ընթանամ. և յուղեռիմ, 'ի յարիլն 'ի բառող ձանապարհ, ողջ ողագոսոց. և՛ն, թէպէտե պահանցեն առնուլ զնոսա 'ի նախդրի տըրականն. կը, \* Այլը անօրէն և անդգամ գնայ զՃաճապարհս թիւրս. — փոխանակ ասելոյց, 'ի Ճաճապարհս. առաջ. պ. 42. \* Ազով և տրամութերթային զերկայնութիւն Ճաճապարհին. — փիմնկ ասելոյց, յերկայնութիւն Ճաճապարհին. էղէլ. ը.

### ԳԼՈՒԽ Խ. ԼՔՆ

Յաղագ. ինդիւստրիալ Պահմազութիւն բայից.

**Ա**սան. իմնդրառութե սոցա պահրտ է գիտել, զի այն բայք՝ որք ասին ըս պատահման դիմազուրկ. որպէս՝ լուսակայ. միանայ. յամակէ. հաւանէ. պատահէ. չիանէ. և՛ն. ևս և այն բայք՝ որք ասին ըս պատշաճի դիմազուրկ. ող՝ հունի. նորի. նորի. հործի. շունի. և՛ն. առնուն զինդիր. 'ի վերջահոլով տրականն, ըս նմին երբեմն և զայլ խնդիր. կը, \* Եւ լուսացաւ նց 'ի քերթոն. — բ. նոգ. բ. 32. \* Հասանէ քեզ դարձել մարդարէանալ. — յայտ. ժ. 44. \* Ոչ ոք արկանէ ձեռն զմանով, և հայիցի յետու եթէ յաջողեալ իոյէ արքայում այ. — դահ. է. 62. \* Խաւարելոյն մտօք և զրկելոցն 'ի Ճշմարտութե դառն թունի ածային օրինադրութ. — իսոր:

\* **Չ**արչարի և անչարչարելի կարծի ինքնեն. — շարժ. նշան. Սոյնպէս և այն բայք, որք ասին բացարձակ կմբ ըս ինքեան դիմազուրկ. որպէս՝ կայել է. պարս է. և՛ն, առնուն զվերջահոլով տրական. կը, \* Այցել է ծառայիցն այ միշտ օրհնել զնա. — իսորակ: Ուր ծառայիցն այ է տրական խնդիր բայիս կայել է. իսկ աներեսոյթ բայս միշտ օրհնել է առնուն բայիս: Բատ այսո՞ւ է և. 'ի սոսին: \* Անդէպ է եպիսկոպոսին հպարտութե և գոռոզութե լինել առնազմութեալ ժողովուրդան. — շարժ. ընդհ: \* Խամաստասիրին պահրտ և արժան է ազատամիտ լինել 'ի նախանձուէ. — սպագ: յակ. ը:

Վայսպիսի բայք երբեմն առանց խնդրոյ դնին. պը,  
• Աւ զբ՞նչ արդեօք պարտ է հառակիս ուսանել. —  
ի՞նչ. ձգ. 6. • Բարի է ուսուցանել... յորժամնախ ին-  
քըն առնվոյէ՝ զոր ինչ այլոց ուսուցանէ. — Գործ. հորդ.  
Գլ բ. • Անիրան է պարծել յիմաստա մարմնց. — Դա-  
րենցի. ել:

### Գ. Լ. Ա. Խ. Խ. Խ.

#### ՅԱՂԱԳԻ ԲՆԱԴՐՈՒ ԷՆԴԱՆ ՀԵԿԻՄ

Խական բայք հասարակօրէն առնուն զինդեք  
յուղղական հոլովն. պը, • Այդին փշաբեր փշալից եղեւ. —  
Տցէ. Է. • Ուր ծշւեցն է ուղղական խնդիր էական բայխ  
եղեւ. իսկ այդին հշումնէ՝ է անուն բային Բատ ոյսմ է տեսա-  
մել և ՚ի սոսին:

• Աս եմ որթն ձշմարիտ, և հայր իմ մշակ է. — յուն-  
ժէ. 4. • Բարք մարդկան հակառակասէր է. — լամբ. սուն-  
• Ու է պատմուի ձշմարիտ առանց ժամանակագրուե. —  
Խոր. բ. 79.

Վայլ աստ պարտ է ՚ի միտ առնուլ բարւոք, զի ելթէ  
էական բայք՝ իցեն յոգնակի, ուղղական խնդիրն բազաւմ  
առգամ դնի եղակի. պը, • Պատք էք ազ երկրի. — հապ.  
Է. 45. • Որոց առաջնորդուեն՝ հայրենի դաստիարակութք  
ուղեկից լինիմք: — Գըիգ. հուն. • Տաճար էիք հոգւոյն ուրյ  
արդ զոհարան դիմաց լինիցիք. — Էղիշ Հըպ. Գլ Գ.

Վայսպիսի սւղղական խնդիրք ուրեք ուրեք դնին, ևս  
և ՚ի նախդրիւ տրականն. պը, • Աս եղեց ձեզ ՚ի հայր, և  
դուք եղիջիք ինձ յուսդերա և ՚ի դստերա. — փոխանակ  
ասելոյ, ես եղեց ձեզ հայր, և դուք եղիջիք ինձ ուստերք  
և դստերք. — Բ. հոր. պ. 48:

Գիտելի է, զի էական բայք յորժամյարին յայնպիսի  
ահնուանս՝ որը ունին զնշանակուի ժամանակայ, չափուց և  
գնոց, առնուն զնոսին խնդիր ՚ի սեռական հոլովն. պը,  
• Այ էր ամաց վեցհարիւրոց, և ջրհեղեղ ջուրցն եղեւ  
՚ի վերայ երկրի. — Ճնճ. է. 6. • Եւ էր լայնուի նորա  
երից կանգնոց. — ՚ի ըսը նիհող'':

Այսպիսի մեռական հոլովք արտօւաց ժամանակաց երբեմն յառքական բայս ևս յարին՝ երբ պատահական խընդիր նոցա այլ այս ՚ի սակաւս զբ, \* Եւ վախճանեցաւ յովսէփ ամաց հարիւթետասամց. — Ճն. ծ. 25:

Պիտելի և ևս, զի անուանք չափուց և կըոց յայլ հոլովք ևս լինին խնդիր էական բայից:

Երբեմն յուղականն զբ, \* Եւ երկայնուն նորա (էր) իննուսուն կանգուն. — Էդէ. իշ. 12: \* Վասն դանկ լիցի երկդրամեանն. — զետ. էն. 25: \* Եւ կշիռ զրահից նորա՝ (էր) հինգ հազար սիկդ պղնձոյ և երկաթոլ. — զ. բագ. ձէ. 5:

Երբեմն ևս յուղականն և ՚իտրականն միանգամայն զբ, \* Եւ դրան արահին վարագոյբք (եղ իցին) քան կանգուն ՚ի բարձրուն. — Էդէ. իշ. 16: \* Եւ եղե (չափն) ըս չափոյ դրանն, որ հայեր ըս արևելս, յիսուն կանգուն յերկայնուն. և քսանւեհինգ կանգուն, ՚ի լայնուն. — Էդէ. իշ. 21:

Խակ երբեմն ՚ի բացառականն զբ, \* ՚Ի քառասուն կանգնոյ եր տոււն. — գ. բագ. զ. 17: \* ՚Ի քսանւեհինգ սկեղէ եղ իցի ձեզ մնաս մի. — Էդէ. իշ. 12:

Երբեմն ևս ՚ի գործիականն զբ, \* Եւ թանձրուն ծովուն (էր) թղաւ. — Է. հաշ. դ: \* Ոչ վայրապար դնե զչափ ձանապարհին՝ երկայնուն ձկ ասպարիզաւ լեալ. — Էդ. էդ. 13:

Խակ վասն այլոց խնդրոց էական բայից ոչ է հնար որոշակի կանոն դնել. զի ըս պահանջման բարին և ըստ զօրուն անուանցն՝ յորս յարին առնուն զինդիր ՚ի զանազան հոլովք բազում անգամ իբր երկրորդականս. զբ, \* ՚Ի զամանական կատաղիս ըլդէմ բնունդ ովլ մարդ. Շնչ նորին բնունդ է ընկերն, որում զայրանաս. — առգ. յաէ, դ. յարդ: \* ՏՌ ինքնին եղ իցի մեզ լոյս մշտնջենական. — յանդ. ինտառ. ն: \* Շազմապատիկ են առ այս սրբոցն բանք. — էդն. ձէ. 9: \* Պիտրդմց սկիզբն յագահուն միրդկն եղե. — Էդն. էն. \* ՚Ի հաւասիկ բանքս ոմ ՚ի կարգի զնչմարիտ օձելոյն է. — առգ. յանդ. 4: \* Եւ եղ իցի հանգիստ նորա պատուվ. — էայ. ձէ. 10: \* ՚Նմկանիցիս դու, և ամենեքին՝ որ դքե իցեն. — Էդէ. լ. 4: \* Շայց որդիք արդարոց ՚ի ձեռին

Թի են. — Իմաստ. գ. 4: \* Ոչ կարեն հօղք առանց հով-  
ուաց լինել. — Իսր. գ. 12: \* Ես արարել ձեր՝ մարդե-  
ղե վասն ձեր. — շնորհ. Բղլ.

### Գ. Լ. Ա. Խ. Խ. Խ. Պ. Ա.

ԳԱԼՈՎԵԼԻԿ ԻՆՉ ՚Ի ՎԵՐԱ ԽՈՇԽՈՅ ԷՄԱՀՅ ՆԻՇ-  
ՔՐԻ ԽՈՎԵԼԻՆ:

**Ա**ման ինչ ինչ գիտելիք ՚ի վերայ խոնդրոյ բայից,  
զորս պատշաճ դատեցաք կարգել յայս գլուխ առանձինն,  
առ ՚ի տալ զնույանէ զորոշ ինչ տեղեկութիւն վասն որոյ:

Գիտելի է նախ, զի բայք բազում անգամ յարելով  
յանուանս ինչ՝ իբրև մի վարին ըստոսա, և առնուն խըն-  
դիր հաղորդական, յը այնպիսին որ ոչ սոսկ բային համա-  
րի, և ոչ լոկ անուանն. այլ երկուցն միամնգամայն և այս  
թէ ՚ի ներգործականս, թէ ՚ի չէղոքականս, և թէ յեա-  
կանս,

՚Ի ներգործականս. զը, \* Գիերկս արկի կենցաղոյս  
սիրոյ. — Նոր. ՚ի: Ուր վերջահոլով տրական հոլովս ՚ի՞նչ  
է խոնդիր գէւէկ ուշինելոյն:

՚Ի չէղոքականս. զը, \* Խրատեաց զաստի կենցաղս  
զնմ ինչ ՚ի բաց ընկենուը և անտի կենացն միայն պատ-  
կառ կալ. — Իժն. ծբ. 32: Ուր վերջահոլով տրական հո-  
լովս անպի հինուցն՝ է խոնդիր պատիւու կուլին:

Հէկականս. զը, Ացորդ լըր հեղութ տաժանաւորս տը-  
կարութէ. — Նոր. ՚ի: Ուր վերջահոլով տրական հոլովս  
պաշանաւոր ահարութէ՝ է խոնդիր հյուր լինելոյն. խակ հեղու-  
թէն է երկրորդական խոնդիր հորին:

Յըրբեմն ևս բայք ինչ յարեալք ՚ի մակրայս, կմ՞ ՚ի  
նախադրութիս՝ իքը մի բայ վարելով ըստոսա, ըս պահան-  
ջելոյ հաշմանակութ նոցա առնուն զիմնդիր հաղորդական. զը,  
\* Հեռի ենյոյ՝ հեռացեալ քնյ յերկիւղե նորա. — Եռոք:  
Ու բացառական հոլովս յայ՝ է խոնդիր հեռի լինելոյն:  
\* Բնդդէմ դարձան պատերազմողաց, և վահեցին զլթ շնա-  
միս. — Իմաստ. չն. 3: Ուր տրական հոլովս պատերազմողաց՝  
է խոնդիր շնդդէմ դաշնություն: \*

զովուրդն. — յովհ. ձբ. 18. Աւը տրական հոլովս նմա՞ է խնդիր ընդ առաջ լինելոյն:

Պահանջման է երկրորդ, զի յորժամ բաղում բայք գան ՚ի միասին, խնդիրն մծատագունին հետեւի պը, \* Եղեալ անձինք օրհնեն և գոհանան զայ՝ զերծեալք ՚ի վտանգից: — Էֆն. ձկ. 12. Աւը խնդիր բային՝ ցը պատմական հոլովդ վայ՝ եղեալ է ըս բնուե այնը բայի՝ որ մօտ է նըմա, այն է՝ բայս գոհանան և ոչ այնը՝ որ հեռի է ՚ի նմանէ, այն է՝ բայս օրհնեն: Բատ այսմ է և ՚ի սոսին:

- \* Հայեցաւ և ետես զինքն լի տկարութեք. — Էշիշն. գ:
- \* Խորհուրդ արարեալ ... հարցին, և քննեցին և ՚ի վերայ հասին մտացն անշարժուե. — ՚ի նոյն: \*
- \* Պակ զհակառ զ չարն՝ ցը զսատանայ, և զորս ՚ի նմանէ սերմանեալ զմեզը՝ ատել և ՚ի բաց դառնամը. — Հորդի:

Շայց երբեմն՝ այլ սակաւ ուրեք հեռագոյն բային հետեւի խնդիրն. պը, \* առին գնացին զնա. — Չուէ. հկ. 26. Աւը հայցական հոլովս զն՝ ոչ է լեալ խնդիր այնը բայի որ մօտ է նմա, ցը է գնացին. այլ՝ այնմ, որ հեռի է ՚ի նմանէ, ցը է՝ առին. որպէս թէ ատեր. առին զնա և գնացին:

Պահանջման է երրորդ, զի յորժամ բաղում բառք նախդրիւ լինին խնդիր բայի, նախդիրն դնի ՚ի վերայ ամ խնդրոց. պը, \* Ենդ տեսանէր պերկիրն աւետեայ, պաշխարհըն կենդանեաց, պլեառն սրբութեան. — Խորեն. հուիդ:

- \* Պահեա ՚ի տեղւոջ հանգստեան մեռօրինակ այսը դադարման՝ յաներեցիթ մտածուեց, ՚ի մասնաւոր սխալուեց, ՚ի մեծագոյն գայթագուուեց, ՚ի փոքրագոյն ոտնառութեց, ՚ի խարերայ չար ձանձրուեց. — Խոր. զն: \*
- \* Տրդատ արքայ հայոց մեծաց՝ առ մեծամեծս և առ իշխանս և առ նախարարս և առ գործակալս և առ այլ մարդիկ, որ ըս իմոլ իշխանութ էք՝ յաւանս և ՚ի շնոս և ՚ի գիւղս և յագարակս ... ողջոյն. — ագամ:

Պահանջման է չորրորդ, զի եթէ խնդիր բային ևս ունիցի զինդիր՝ եղեալ նախ քան զինքն, և կմ զայլ ինչ բառ, նախդիրն հասարակօրէն դնի ՚ի վերայ նորին, ցը ՚ի վերայ խնդրոյ խնդրոյն պը, \*

- \* Պարծեցուցանես ՚ի պայծառուի քումդ տեսակի զքե պանծացեալմն. — ցըզպանծա-

ցեալմն քեւ. Դար. զը: \* Որ բանիէ միայն ունի պառ. 'ի յած-խոստովանութի, այլ ոչ գործով, այնպիսւոյն հաւատն մեռել է. — յր որ բանիէ միայն ունի զխոստովանութի առ ած նու, այնպիսւոյն հաւատն մեռ եալ է. Հարը. ընդհ: \* Տարածեալ զանձն իմ առաջի պի մահ գլորմանն ցուցից կերպարան. — յր ցուցից դկերպարան գլորմանն 'ի մահ. Դար. կ բանն. լի: \* Առողջո՞ւ ոչ զորս յոզ ջութեն են, այլ՝ պրիոր ախտիք հիւանդացեալս ասիցէ. — յր դհիւանդացեալս բիոր ախտիք. Հարը. կ բանն: \* Այս զի՞ զոր ըս նախայօժար կամաց ատեցաք զհողեոլն խաղաղութի զըկեաց ած և 'ի մարմնով զնոյն ունելոյն. — յր յունելոյն զնոյն մարմնով. լին: առէն: \* Աթէ ամբարես զառանց համարոյ գործոց իմ չարիս, մեռաց կենդանոյն. — յր զգործոց իմոյ չարիս, որք են առանց համարոյ. Դար. հը: \* Պիտրոս սէր կարծէր պի վերայ փրկչին մեռանելն. — յր զմեռանելն 'ի վերայ փրկչին. լին: առը. ճշը. 27:

Խակ երբեմն դնի 'ի վերայ երկուց կմբ բազմաց ես. կը,  
\* Որք զառ 'ի քո՞ չչարչարանս յանձն առեալ համբերեցեցիք. ուլ ածասէր հայրապետք. — 'ի շը բնունոց. ինան. ճէ՞զ:  
\* Որ զարարչակիցն հօր չ'ի սկզբանէ զբանն ած յորովայնի քում կրեցեր. 'ի նոյն. չ:

## Գ. Լ. Ա. Խ. Խ. Ե. Ե.

Օ առ ինչ ասացաք զբայից, և զիսնդրառութեց նոցին, զայն ամ պարտ է իմանալ և զաներեռութից, ըս որս և զդերբայից, ըս որում են բայք. Խակ յաղագս լինելոյ սոցա անուն բայի և ինդիր բայի՝ խօսեցաք 'ի գլ ծը 'ի հանան. լի: Ա՞սայ մեզ այժմ խօսել զսոցանէ՝ ըս լինելոյ սոցա ինդիր բնում, և ըս այլ ինչ մասնաւոր ծանօթութեանց:

Արդ՝ սոքա յր աներեռոյթ բայք՝ բազում անգամ լինին պատահական և երկրորդական ինդիր բայից երբեք դդ-դերբայ, զօրութե ունելով զնախդիրն 'ի կմ առ ՚ի, 'ի տրական հոլովն. կը, \* Բունանայ տիրել և զօրանայ յազթել —

ԷՇՆ. յառաջ է: Ուր տիրելն է խնդիր բռնանալոյն, և յաղթելն զօրանալոյն, իբր դեբբայ. որոց հախդիրն եղեալ է զօրութ. որպէս թէ ասէք. բռնանայ ՚ի տիրել, և զօրանայ առ. ՚ի յազթել:

Երբեմն ևս աներեւյթ բայք՝ մահաւանդ չեղոբականքն և էականք՝ լինին ուղղական խնդիր ներգործական բայից. պը, \* հուպ առ միմեանս եղեալ (զփարիսեցին և զմաքսաւորն) զմինն վասն ամբարտաւանութեն ըլշարս պատժէ. և զմիւմն վասն խոնարհուեն արդարանալ վկայէ. — ԷՇՆ. Ժ. 10: Ուր բառս զմիւմն է խնդիր սեռի բայիս վկայէ. և արդարանալն է իբր ուղղական խընդիր նորա. իսկ վասն խոնարհուեն է խնդիր արդարանալոյն: \* Լ. Ա. ևս մեծոմեզս զնոսա յանդիմանէ լինել. — ԷՇՆ. Ժ. 4: 1: Ուր բառս զնոսա՝ է խնդիր սեռի յանդիմանելոյն, լինելն ուղղական խնդիր նորա, իսկ այլ ևս մեծամեզսն է ուղղական խնդիր բայիս լինել:

Յայսպիսի բանս՝ հայցական հոլովք՝ որք դնին իբր խնդիր սեռի ներգործական բայից, համարին լինել ևս զօրութեն անուն բայի աներեւյթ բայիցն՝ որք դնին իբր ուղղական խնդիրն Լ. Ա. եթէ նորավարժք չկարիցեն զայսպիսի գործածութ աներեւյթ բայից որոշել, կարեն համարի զայնս՝ արգելիչ խնդրոյ. զորմէ խօսեսցուք յառաջիկոյդ:

### ԱՆԵՐԵՎՅԹ ԻՆԴՐՈՅ ՔԱՅԻՑ:

Վ. Ա. աներեւյթք բայք բազում անգամ ՚ի բազում տեղիս լինին արգելիչ խնդրոյ բայից. իբր զի ը առաջ ելել դիմաւոր բայի՝ արգելուն զ խնդրառութ նորա. զի խնդրնին եւալ խնդիր բային՝ ինքն անք առնուն զխնդիրն ըստ պահանջելոյ բնութ իւրեանց. պը, \* Որ խօստացար տալ զփականացելոյ բնութ իւրեանց. պը, \* Որ խօստացար տալ զփականաց արքայութ երկնից երանելոյն պետրոսի. — շը. Ժ. 1: Ուր աներեւյթ բայս դու՝ ը առաջ ելեալ դիմաւոր բայիս իսորոշութ եւալ է նմին իբր խնդիր, և արգելեալ է զխնդրառութ նորին. և ինքն է առեալ խնդիր սեռի բգառդ՝ զ իսկ արքայութ երկնից. նաև խնդիր բնութեն, զբառդ՝ երանելոյն պետրոսի:

Ա. Ճ. գիտելի է նախ, զի արգելի խնդրոյ լինին՝ Եւսի՝ ներգործական աներևոյթք՝ ներգործական բայից. պի, և Շնուին մեր սիրէ ծածկել զմերկուի. — Եղիւ. Երբու Ուր ներգործական աներևոյթ բայս ծածկել է արգելի խնդրոյ ներգործական բայիս ուրէ. և ինքնէ առեալ խընդիր դրառդ զեւհուն:

Երկրորդ՝ չեղքականք՝ չեղոքականաց. պի, և Հսկեսացուք մտանել չեղ դուռն. — Գորտ հաջ. Է: Ուր չեղոքական աներևոյթս մտանել է արգելի խնդրոյ չեղոքական բայիս հունդուած. և ինքն առեալ է խնդիր զբառդ՝ չնդ նեղ դուռն:

Երրորդ՝ ներգործականք՝ չեղոքականաց. պի, և Դու ջանա գործել զբարիս, և մի երկնչիր ՚ի տկարուիք քում մէ. — Գորտ հաջ. Գւ Է: Ուր ներգործական աներևոյթս գործել է արգելի խնդրոյ չեղոքական բայիս ջանա. և ինքն առեալ է խնդիր զբառդ՝ չնդ նեղ դուռն:

Չորրորդ՝ չեղոքականք՝ ներգործականաց. պի, և ԱՌովսէս աղաջեաց մտանել ՚ի պարգևական երկիր. — Չորդ. յուն. 2: Ուր չեղոքական աներևոյթս մտանել է արգելի խնդրոյ ներգործական բայիս աղուչէց. և ինքն առեալ է խնդիր զբառդ՝ ՚ի պարգևական երկիր:

Պախելի է երկրորդ, զի երբեմն աներևոյթ բայն ինի արգելի խնդրոյ սեռի միոյն, և ոչ խնդրոյ բնութե. պի, Ուսո՞ մեզ առնել զարդարուիք շշմարտութե. — Ճահաճ. Ուր աներևոյթ բայս առնել՝ արգելւալ է զինդիր սեռի բայիս ուսո՞: և ոչ զբնութե՞ն:

Պախելի է երրորդ, զի երբեմն արգելի խնդրոյն նախադասի դիմաւոր բային. պի, և Հաստանել փութայր զկապ միաբանուե սիրոյ նոցա. — յուն. հուն: Ուր արգելի խնդրոյն՝ հապանէն՝ նախադասեալ է բայիս հա-նոյր:

Աւ երբեմն ևս՝ խնդիր արգելւին նախադասի քը ըզդիմաւոր բայն, որ անկանի ՚ի մէջ արգելչին և ՚ի մէջ խնդրոյ նորա. պի. և Օտիկեղեքս բաւեցին խուլ շնորհօք հոգւոյն սրբու. — էֆն. յառաջ բայս խնդիր սեռի աներևոյթ բայիս նուռ՝ որ է արգելի խնդրոյ, եղեալ է նախ քան զդիմաւոր բայս բայս բայս խնդիր բնութեն:

եղեալ է զկնի. զոր մարթեր դնել այսպէս. բաւեցին լը-  
նու լ զտիեցերս չնորհօք հոգւցն սրբոյ:

Պիտելի է չորրորդ, զի բազում անգամ միոյ բայի  
լին բազում արգելիչք խնդրոյ. պը, \* Փութացաւ  
վաղվաղակի զօր ժողովել գուշտ կազմել. — Եղեշ. չ:  
Աւր երկոքին աներեցիթքս ևս՝ ժողովել էալիլ են արգե-  
լիւ խնդրոյ բայիս հա-նացու:

### ԳԼՈՒԽ. ԽՈՇ

ՅԱՂԳ. ԴԵՐԵՎԱԿԻ:

**Դ**երբայք են աներեցիթ բայք հոլովեալք երբ  
անուն: Աօքա թեպէտ միշտ ուշին զզօրուն բոյի, բայց ո-  
րովհետեւ իբր անուն հոլովին՝ գրեթէ ըս օրինակի գոյա-  
կանաց վարին: Ուստի և իբր գոյական անուն:

Նախ՝ լինին յատկացուցիչ. պը, \* Աւ ունի ականջս  
լսելոյ լուիցէ. — Տագ. Ճ. 15: Աւր դերբայս լելոյ՝ է  
յատկացուցիչ ականջ:

Երկրորդ՝ լինին բացայայտիչ. պը, \* Յերկոսին զօ-  
րաւոր է՝ 'ի պատժելն և 'ի բարեգործելն. — Գէռրգ. էգ:  
Աւր դերբայքդ՝ 'ի դադէնն և 'ի բարեգործնն՝ լեալ է բա-  
ցայայտիչ անուանդ յերկոսին:

Երրորդ՝ լինին խնդիր նախադրուեց. պը, \* Այս ուս-  
ցոք զգերս նոյ վասն կարդալոյ միայն, այլ և վասն առնե-  
լոյ. — Տճ. Ճ.:

**Չ**որրորդ՝ լինին խնդիր անուանց. պը, \* Եւ քանզի  
ոչ գտայ արժանի պարծելոյ 'ի փառս ըս սրբոցն դաս ...  
'ի կարգն երկրորդ դիմեցից՝ զնմանին իմ յիշատակել. —  
Դար. և Աւր դերբայս պարծելոյ՝ հանդերձ խնդրով իւ-  
րովի, (որ է՝ 'ի փառս ըս սրբոցն դաս), է տրական խնդիր  
անուանս ուժանի:

